«ԳԱԶՇԻՆ ՄԶ»
«ГАЗШИН МЦ»
«GAZSHIN MZ»

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԳՇ-114/25

ք. Երևան

«01» 12. 2025թ.

Հ Հ Կ Ճ Պետական Ցանցային

(կազմակերպության անվանումը)

(այսուհետև՝ Պատվիրատու),ի դեմս Գ.Խաչատուրի Բալասանյանի Դ/Հ.

(պաշտոն)

Կ. Գևորգյան

(Անուն,Հայրանուն,Ազգանուն)

որը գործում է համաձայն կանոնադրության հիմա վրա, մի կողմից, *«ԳԱԶՇԻՆ ՄԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետև՝ Կատարող), ի դեմս տնօրենի ժ/պ՝ Ազատ Արամի Ասատրյանի,* որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության ,մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝

1. Գրասենյակ և օդորակիչ սպասարկում ստորգետնյա հեռակա սարքավորում

2. Գրասենյակ պարբերաբար սանիտարական մաքրում

այսուհետ «Ծառայություններ»:

1.3. Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ «01» 12 2025 թ. մինչև «01» 01 2026թ.: Կատարողն իրավունք ունի Ծառայությունները մատուցել ժամկետից շուտ.

1.3.1. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցիչների կողմից ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանգրի 1.3. կետում նշված ժամկետում.

2.2. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունները վճարել սույն պայմանգրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1.Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին:

3. Պայմանագրի գինը և վարձատրությունը

3.1. Սույն պայմանագրի գինը կազմում է՝

70000 + 14000 = 84000
30000 + 6000 = 36000 } 120000

3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանգրում նշված Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Վեճերի լուծման կարգը

Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծում է ՀՀ-ում գործող օրենսդրության համաձայն:

6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Սույն պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից: Սույն պայմանագրի հավելվածները դրա անբաժանելի մասն են:

6.2. Սույն պայմանագիրը կազմված է երկու էջից, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է պայմանագրի մեկական օրինակ:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	Կատարող՝
22. Վ. Ջ. Դոլուխանյան Տատուր	«Գազշին ՄՁ» ՍՊԸ
Հասցե՝ Գ. Էջմիածին 23/1	Գործ. հասցեն՝ ք. Երևան Արին-Բերդի
ՀՎՀՀ՝ 02[illegible]	փողոց 5-րդ նրբանցք 1/1
Հ/Հ՝ 9 [illegible] 613	Հեռ. +374 10 471286
Բանկ՝ [illegible]	ՀՎՀՀ՝ 02229549
Տնօրեն [illegible] Դ. Գ.	Հ/Հ՝ 2480101509490000
	Բանկ՝ «Արդշինբանկ» ՓԲԸ
	Տնօրենի ժ/պ՝ Ա. Ասատրյան
Ստորագրություն՝ Ա. Դոլուխանյան	Ստորագրություն՝